ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒՆՎԱՐ 2004)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ինչպես նաև ՀՀ վճարահաշվարկային, բանկային համակարգի
հիմնական ցուցանիշների և տնտեսական նորմատիվների
վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և բանկային
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և բանկային վիճակագրությունում ընդգրկված է
ՀՀ միջազգային պահուստների, փողի ագրեգատների,
ֆինանսական շուկայի և փոխարժեքների վերաբերյալ
տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Տնտեսական աճ: 2004 թ. հունվարին տնտեսական աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 4.4%: ՀՆԱ աճը հիմնականում պայմանավորվել է զուտ անուղղակի հարկերի (ազդեցությունը ՀՆԱ աճի վրա կազմել է 4.1 տոկոսային կետ), ծառայությունների (3.8) և գյուղատնտեսության (0.5) ոլորտների ցուցանիշի աճով: ՀՆԱ դեֆլյատորը 2004 թ. հունվարին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 112.4%, ինչը հիմնականում պայմանավորվել է արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսի համապատասխան փոփոխություններով:

Սղաճ: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2004թ. հունվարին գրանցվել է սպառողական գների ընդհանուր մակարդակի 2.5% աճ, ինչը հիմնականում պայմանավորվել է «Բանջարեղեն և կարտոֆիլ» (23.3%) և «Միրգ» (13.7%) ապրանքախմբերի գնով, որոնք ապահովել են գնաճի՝ համապատասխանաբար 1.6 և 0.5 տոկոսային կետերը: Ընդ որում, սեզոնային ապրանքների գների փոփոխությունն ապահովել է սղաճի 2.09 տոկոսային կետը, պետության կողմից կարգավորվող ծառայությունների սակագների փոփոխությունները՝ -0.01 տոկոսային կետը, իսկ բնականոն սղաճը՝ 0.44 տոկոսային կետը:

2004 թ. հունվարին, 2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, սպառողական գների ինդեքսը կազմել է 106.3%:

Արտաքին հատված: 2004 թ. հունվարին ապրանքների արտահանումը (FOB գներով) կազմել է 37.7 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազելով 10.4%-ով: Արտահանման նվազումը հիմնականում պայմանավորվել է արտահանման մեջ շուրջ 50% կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և 5.9% կազմող «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի արտահանման ծավալների՝ համապատասխանաբար 31.5% և 34.8% նվազմամբ:

Ներմուծումը (CIF գներով) կազմել է 74.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազելով 14.1%-ով: Ընդ որում, ներմուծման նվազումը հիմնականում պայմանավորվել է շուրջ 10.5% կազմող «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի ծավալների 56.3% նվազմամբ: 29.2%-ով նվազել են նաև ներմուծման մեջ մոտ 20% կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ներմուծման ծավալները:

Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ցուցանիշը հաշվի առնելու՝ արտահանումն ավելացել է 29.2%-ով, իսկ ներմուծումը նվազել 9.2%-ով:

Արդյունքում, 2004 թ. հունվարին առևտրային հաշվեկշռի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, նվազել է 17.4%-ով (առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» հոդվածի ցուցանիշի՝ 20.1%-ով) և կազմել 37.3 մլն ԱՄՆ դոլար:

2004 թ. հունվարին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին անվանական հաշվարկային փոխարժեքը կազմել է 568.4 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ արժեքավորվելով 2.5%-ով: Նախորդ ամսվա համեմատությամբ հունվարի միջին փոխարժեքը արժեզրկվել է շուրջ 0.6%-ով: 2004 թ. հունվարին եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի միջին անվանական հաշվարկային փոխարժեքը կազմել է 717 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ արժեզրկվելով 15.7%-ով: Նախորդ ամսվա համեմատությամբ եվրոյի միջին փոխարժեքը արժեզրկվել է 3.4%-ով:

Պետական հատված: Հունվարին պետական բյուջեի փաստացի ցուցանիշները շեղվել են ծրագրված մակարդակներից: Բյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են 17.5 մլրդ դրամ՝ ծրագրային ցուցանիշը գերազանցելով 1.9 մլրդ դրամով, ընդ որում, հարկային եկամուտները կազմել են 16.7 մլրդ դրամ (ծրագրված 14.5 մլրդ դրամի փոխարեն), իսկ ոչ հարկային և կապիտալ եկամուտները՝ 0.8 մլրդ

դրամ (ծրագրված 1.0 մլրդ դրամի փոխարեն): Ամսվա հարկային եկամուտների միջին օրական մուտքերը կազմել են 0.9 մլն դրամ՝ դեկտեմբերի 1.2 մլրդ և նախորդ տարվա հունվարի 0.5 մլն դրամի փոխարեն:

Տարեսկզբին հարկերի հավաքագրման գործընթացը համաչափ բնույթ է ունեցել: Այսպես, ամսվա վերջին օրը հավաքագրված հարկերը կազմել են ամսվա հարկերի 7.2%-ը՝ դեկտեմբերի 13.4 %-ի փոխարեն:

Բյուջեի ծախսերը հունվարին կազմել են 6.9 մլրդ դրամ՝ ծրագրով նախատեսված 8.6 մլրդ դրամի փոխարեն: Արդյունքում, հավելուրդը կազմել է 10.6 մլրդ դրամ, որը ձևավորվել է արժեթղթերի տեղաբաշխումից ստացված զուտ մուտքերի (–1.4 մլրդ դրամ) և միասնական հաշվի ավելացման (9.2 մլրդ դրամ) հաշվին:

ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ ՀՀ կառավարության պարտավորությունները ամսվա ընթացքում նվազել են մոտ 9.2 մլրդ դրամով և կազմել 40.7 մլրդ դրամ:

Դրամավարկային քաղաքականություն: Ինչպես յուրաքանչյուր տարի, այս տարվա սկիզբը ևս բնութագրվել է գործարար պասիվության ու փողի համեմատաբար ցածր պահանջարկի դրսևորումներով: Դրա, ինչպես նաև նախորդ տարվա վերջին փողի առաջարկի կտրուկ աճի (դեկտեմբերին՝ 16.1 մլրդ դրամ) ազդեցությամբ ձևավորվել էր ավելցուկային իրացվելիության բարձր մակարդակ: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ այս տարվա առաջին եռամսյակում, և մասնավորապես հունվարին, Կենտրոնական բանկը ծրագրել էր փողի բազայի զգալի կրճատում: Առաջին եռամսյակում փողի բազան պետք է կրճատվեր մոտ 11.2 մլրդ դրամով, որի ավելի քան 85%-ը՝ հունվարին: Ընդ որում, որպես փողի բազայի կրճատման հիմնական երկարաժամկետ գործիք նախատեսվում էր արտարժույթի վաճառքը՝ պայմանավորված տարեսկզբին արտարժույթի մեծ պահանջարկով. միաժամանակ ակնկալվում էր ավելցուկի կարգավորման կարճաժամկետ գործիքի՝ ԿԲ-ում ավանդների ներդրման՝ բանկերի ակտիվ նախաձեռնությունը:

Փաստացի արդյունքներով փողի բազան նվազել է 15.5 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 103.1 մլրդ դրամ՝ տատանումների թույլատրելի միջակայքի ստորին սահմանից փոքր-ինչ ցածր: Նվազումը գերակշիռ մասով պայմանավորվել է ԿԲ ՁՆԱ-ի կրճատմամբ (13.3 մլրդ դրամով). անկման սեզոնային դրսևորումներն արտահայտվել են հիմնականում ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկի նվազողական վարքագծում: Փողի բազայի կառուցվածքում 13.2 մլրդ դրամով նվազել է կանխիկը, ինչն ուղեկցվել է ԿԲ-ում բանկերի թղթակցային հաշիվների միջոցների՝ 2.3 մլրդ դրամով նվազմամբ: Ընդ որում, եթե կանխիկն ամսվա ընթացքում ցուցաբերել է աստիճանական նվազման միտում, ապա թղթակցային հաշիվների միջոցները կրճատվել են հիմնականում վերջին օրվա ավանդային գործարքի հաշվին, թեև ամսվա առաջին կեսին դիտվել է նվազում, որը երկրորդ կեսին չեզոքացվել է նույնքան աճով:

Փողի առաջարկի կարգավորման գործընթացում Կենտրոնական բանկի ՁՆԱ-ի վերոնշյալ մեծածավալ կրճատման հետևանքով փոխվել են փողի բազայի վրա փողի առաջարկի տարրերի ազդեցության ծրագրված համամասնությունները: Այսպես, ԿԲ ՁԱԱ-ն նախատեսվածից քիչ են նվազել՝ արտարժույթի վաճառքի փոքր ծավալների (1.5 մլրդ դրամ) պատճառով. փոխարենը, առավել շատ են նվազել ԿԲ հանդեպ Կառավարության պարտավորությունները՝ պայմանավորված Կառավարության կողմից իրականացված հարկաբյուջետային քաղաքականության ավելցուկային ռեժիմով: Արդյունքում, 9.2 մլրդ դրամով ավելացել են Գանձապետարանի միասնական հաշվի միջոցները ԿԲ-ում, և մնացորդն ամսվա վերջին կազմել է 41.5 մլրդ դրամ:

Արտարժույթի նկատմամբ պահանջարկի աճի ակնկալվող տեմպերի չդրսևորման պարագայում արտարժույթի վաճառքի գործիքին, զսպողական հարկաբյուջետային քաղաքականության հետ մեկտեղ, փոխարինել է մշտական հնարավորության ավանդային գործիքը, որի համախառն ծավալը կազմել է 11.7 մլրդ դրամ, իսկ իրացվելիության զուտ ներքաշումը՝ 3.2 մլրդ դրամ: Միաժամանակ, հունվարի վերջին կնքվել է 1.0 մլրդ դրամի հակադարձ ռեպո համաձայնագիր: Արդյունքում, բանկերի պարտավորությունները ամսվա կտրվածքով նվազել են 4.2 մլրդ դրամով և կազմել 4.4 մլրդ դրամ:

Այդուհանդերձ, ներքաշող գործիքների նման մեծածավալ կիրառման պարագայում հունվարն աչքի է ընկել բանկերի կողմից տնօրինվող իրացվելիության ավելցուկի բարձր մակարդակով՝ միջին ամսական 5.4 մլրդ դրամ նախորդ ամսվա 4.3 մլրդ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 4.6 մլրդ դրամի փոխարեն: Այս հանգամանքը դարձյալ վկայում է այն մասին, որ տարեսկզբին փողի պահանջարկի անկումն անդրադառնում է առավելապես կանխիկ իրացվելիության վրա, որի հոսքը Կենտրոնական բանկ արտահայտվում է թղթակցային հաշիվներում միջոցների կուտակմամբ, հետևաբար և ավելցուկային պաշարների աճով, և ԿԲ կողմից կիրառված ներքաշող գործիքները նպատակաուղղվել են հիմնականում դրանց կրճատմանը:

Փողի զանգվածը (առանց կուտակված տոկոսների) հունվարին նվազել է 12.9 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 220.3 մլրդ դրամ: Դա պայմանավորվել է բացառապես դրամային բաղադրատարրերի, և հատկապես շրջանառությունում գտնվող կանխիկի կրճատմամբ՝ համապատասխանաբար 13.3 մլրդ (դրամային զանգվածի մակարդակն ամսվա վերջին կազմել է 120.0 մլրդ դրամ) և 12.9 մլրդ դրամով: Ավանդների կառուցվածքում 858 մլն դրամով նվազել են դրամային և 438 մլն դրամով ավելացել արտարժութային ավանդները, սակայն եթե առաջինի փոփոխությունները պայմանավորվել են ցպահանջ ավանդների նվազմամբ, ապա երկրորդի վրա գերակշիռ ազդեցություն է ունեցել ժամկետային ավանդների աճը:

Կանխիկի մեծածավալ նվազման և արտարժութային ավանդների ազդեցությամբ դիտվել է փողի բազմարկչի աճ՝ նախորդ ամսվա 1.97-ից հասնելով 2.14 մակարդակի, իսկ դրամային բազմարկիչը՝ 1.12-ից 1.16-ի: Այս ցուցանիշների աճն ամսվա ընթացքում որոշ չափով զսպվել է ձևավորված ավելցուկ պաշարների մեծ մակարդակի ազդեցությամբ:

Ֆինանսական շուկայում միտումները ձևավորվել են իրացվելիության ավելցուկի բարձր մակարդակի ազդեցությամբ, որի պարագայում շարունակվել է տոկոսադրույքների նվազումը: Դա հատկապես արտահայտվել է երկրորդային շուկայի տոկոսադրույքների վարքագծում, քանի որ ՊՊ առաջնային շուկան բավականին պասիվ է եղել, և տեղաբաշխումը կատարվել է ամսվա վերջին շաբաթում՝ 9-12-ամսյա արժեթղթերի եկամտաբերությունը տարեսկզբի 9.7-ից իջել է 7.5%: ՊՊ երկրորդային շուկայում տոկոսադրույքները նվազել են շուրջ 4 տոկոսային կետով՝ ամսվա վերջին կազմելով 6.1%, իսկ միջբանկային ռեպո գործառնությունների շուկայում տոկոսադրույքը 7.1-ից իջել է 6%: Թեև բանկերի կողմից տեղաբաշխված և ներգրավված միջոցների տոկոսադրույքները ևս նվազել են, սակայն դրանց միջին կշռված մեծությունը՝ բանկային տոկոսի հաշվարկային դրույքը պահպանվել է 18% մակարդակում: Ելնելով շուկայական տոկոսադրույքներով ավելցուկային իրացվելիության կրճատման հնարավորությունից՝ Կենտրոնական բանկի խորհուրդն անփոփոխ է թողել ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները. ռեպո համաձայնագրերինը՝ 7%, լոմբարդային վարկերինը՝ 20% և ավանդներինը՝ 3.5%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Անվանում	*2003 թ. հունվար – դեկտեմբեր*	*2003 թ. հունվար – դեկտեմբերի իրական աճի հնդեքսը 2002 թ. հուն-վար – դեկտեմբերի նկատմամբ (%)*	*2004 թ. հունվար*	*2004 թ. հունվարի իրական աճի հնդեքսը 2003 թ. հունվարի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն ՀՀ դրամ)*	1618577.0	113.9	61100.7	104.4
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	104.7	-	112.3	-
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար ՀՀ դրամ. աճողական)* [1,3]	1456.1	113.4	55.8	104.8
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	423717.4	114.9	33342.4	91.1
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	5500.6	99.8	603.4	102.3
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն ՀՀ դրամ)*	410138.4	104.3	12624.1	104.3
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	710245.8	114.5	44861.5	109.7
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	225931.2	140.0	2782.1	91.0
Բնակչության դրամական եկամուտները *(մլն ՀՀ դրամ)*	1163637.2	109.9[1]	63691.9	119.3[1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն ՀՀ դրամ)*	1158887.7	112.2[1]	76843.9	111.9[1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	32737.0	116.2[1]	36448.0[4]	123.9[1,4]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1236.4	-	1212.7	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	124.8	-	118.4	-
Գործազրկության մակարդակը (%)	10.1	-	9.8	-

II. Արտաքին հատված

Անվանում	*2003 թ. հունվար-դեկտեմբեր* *(մլն ԱՄՆ դոլար)*	*2003 թ. հունվար – դեկտեմբերը 2002 թ. հունվար – դեկտեմբերի նկատմամբ (%)*	*2004 թ. հունվար* *(մլն ԱՄՆ դոլար)*	*2004 թ. հունվարը 2003 թ. հունվարի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	678.1	134.2	37.7	89.6
Ներմուծում *(ՍԻՖ)*	1269.4	128.6	74.9	85.9
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	591.4	122.7	37.3	82.6

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.5	101.1	100.3	98.5
2004 թ. հունվարը 2003 թ. հունվարի համեմատությամբ	106.3	129.7	102.9	101.3

IV. Սղաճ

Ժամանակաշրջան	*2002*	*2003*	*2004*	*2004*
	Նախորդ ամսվա նկատմամբ (%)			*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	2.2	4.1	2.5	2.5
Փետրվար	-0.7	-1.5		
Մարտ	-0.6	-0.5		
Ապրիլ	2.5	2.0		
Մայիս	1.7	1.2		
Հունիս	-0.5	1.4		
Հուլիս	-5.0	-5.5		
Օգոստոս	-3.0	-2.3		
Սեպտեմբեր	-0.6	2.5		
Հոկտեմբեր	0.5	-0.1		
Նոյեմբեր	2.2	2.2		
Դեկտեմբեր	3.6	5.2		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	2.0	8.6		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	1.1	4.7		

V. Սպառողական գների փոփոխությունները [1]

Ցուցանիշներ	*Բնականոն սղաճ*		*Սեզոնային ապրանքներ*		*Պետ. կողմից կարգ. ծառ.*		*Սղաճ [2]*
	գների փոփոխությունը	ընթացումը սղաճին (տոկոսային կետ)	գների փոփոխությունը	ընթացումը սղաճին (տոկոսային կետ)	գների փոփոխությունը	ընթացումը սղաճին (տոկոսային կետ)	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
Հունվար	0.6	0.4	20.1	2.1	-0.1	0.0	2.5


[1] ՀՀ ԿԲ հաշվարկներով:
[2] Նշված երեք ընթացումների գումարը պետք է հավասար լինի վերջին սյունակում ներկայացված սղաճի ցուցանիշին:
[3] Հաշվարկներում կիրառվել է ՀՀ ԱՎԾ կողմից 2001 թ. մարդահամարի արդյունքների հիման վրա վերանայված զբաղվածների թվաքանակի ցուցանիշը:
[4] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական գնահատումների:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

(մլն ՀՀ դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ				Կառավարության ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2] փոփոխությունը	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2,3] փոփոխությունը
	տեղական կարճաժամկետ կրամատոմսեր	տեղական միջին-ժամկետ կրամատոմսեր	տեղ. տրժեթեթերի ուսիտուտներ	ընդամենը	կենտրոն. կառավ. հաշիվներում ավանդներ դրամով	կենտրոն. կառավ. հաշիվներ արտարժ.	ՇԻԳ-երի միջոցներ դրամով	ՇԻԳ-երի միջոցներ արտարժույթով	ընդամենը		
2003											
Դեկտեմբեր	0	1047	0	1047	32357	156	41	0	32554	**-31507**	***-31800***
2004											
Հունվար	0	1047	0	1047	41597	156	3	0	41757	**-40710**	***-40804***


[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:
[2] Կառավարության նկատմամբ պահանջների և Կառավարության ավանդների տարբերությունը:
[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:



ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ [1, 2]

(մլն ՀՀ դրամ)

Ժամկետ	Առևտրային բանկերի պարտավորությունները Կառավարության նկատմամբ[3]	Կառավարության ավանդները ԿԲ-ում[4]	Ընդամենը
2003			
Դեկտեմբեր	12279	32554	44833
2004			
Հունվար	12107	41757	53864



[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ: Ներկայացված տվյալները հաշիվների մնացորդներն են ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

[2] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[3] Ընդգրկված են առևտրային բանկերի ցպահանջ և ժամկետային պարտավորությունները Գանձապետարանի նկատմամբ՝ բացառությամբ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նկատմամբ պարտավորությունների:

[4] Ընդգրկված են հանրապետական բյուջեի և ՏԻԳ-երի միջոցները:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03	Հ – 04
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)		
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***153675***	***151496***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-35089***	***-48377***
Կառավարություն	-31507	-40710
Կենտրոնական կառավարություն	-31507	-40710
Բանկեր	8600	4375
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0
ավանդներ (-)	-100	-3300
Հակադարձ ռեպո (-)	0	-1025
Արժութային սվոպ (-)	0	0
Զուտ այլ ակտիվներ	-12182	-12042
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***116654***	***105172***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***118586***	***103119***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	96838	83686
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	21047	18856
Այլ հաշիվներ	700	577
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	657	517
Այլ հաշիվներ (արտարժույթով)	43	60
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)		
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-2179***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-13288***
Կառավարություն	-	-9203
Կենտրոնական կառավարություն	-	-9203
Բանկեր	-	-4225
այդ թվում՝ ավանդներ (-)	-	3200
Զուտ այլ ակտիվներ	-	140
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***-***	***-11482***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-15467***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13152
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-2191
Այլ հաշիվներ	-	-123
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	-140
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	17
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)		
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-1.4***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-37.9***
Կառավարություն	-	-29.2
Բանկեր	-	-49.1
Զուտ այլ ակտիվներ	-	1.1
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***-***	***-9.8***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-13.0***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13.6
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-10.4
Այլ հաշիվներ	-	-17.6

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱԱ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 566 ՀՀ դրամ, 1 ՀՓԻ = 1.4860 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.2407 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի = 413.5 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջին:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03[3]	Հ – 04
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**40586**	**43037**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	97945	101612
Արտաքին պարտավոր. փոխարկելի արտարժույթով	-54608	-55919
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-2750	-2656
ՋՆԱ	**100535**	**98225**
Կառավարություն	16902	16184
Ջուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	16607	18601
Պահուստային ակտիվներ	25478	27360
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-8870	-8759
Տնտեսություն	103218	101543
Ձեռնարկություններ	61094	59714
Դրամով	22875	23017
Արտարժույթով	38183	36661
Արժեթղթեր	37	37
Տնային տնտեսություններ	35384	35916
Դրամով	7839	7836
Արտարժույթով	27544	28079
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	59	35
Դրամով	12	13
Արտարժույթով	47	23
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6645	5841
Դրամով	2145	1752
Արտարժույթով	4500	4090
Այլ ռեզիդենտներ[2]	37	37
Դրամով	0	0
Արտարժույթով	37	37
Ջուտ այլ ակտիվներ	-36193	-38103
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	3028	2784
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժ.)	1974	12319
Արտաքին պարտավոր. (ոչ փոխարկելի արտարժ.)	-412	-10571
Ներդրումներ փայաբաժիններում	514	501
Միջբանկային պահանջներ	3574	4793
Այլ ակտիվներ	26558	27114
Միջբանկային պարտավորություններ	-3544	-4654
Դրամական շուկայի գործիքներ	-562	-566
Կապիտալ հաշիվներ	-55148	-54195
Այլ պարտավորություններ	-12175	-15628
ԱՎԱՆԴՆԵՐ	**141121**	**141262**
Դրամով ավանդներ	40756	40476
Ցպահանջ ավանդներ	30618	26540
Ժամկետային ավանդներ	10138	13936
Ավանդներ արտարժույթով	100365	100785
Ցպահանջ ավանդներ	51034	48978
Ժամկետային ավանդներ	49331	51808

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] Չդասակարգված պահանջներ: «Փողի զանգվածի կառուցվածքը» աղյուսակում սույն պահանջներն ընդգրկված են «Ձեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:

[3] Կատարվել է հաշիվների վերադասակարգում համապատասխան ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության նոր ձեռնարկի (2004 թ.), որի արդյունքում որոշ ցուցանիշներ տարբերվում են նախորդ հրապարակումներից:

ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03[6]	Հ - 04
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)		
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2]	***194261***	***194533***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***39557***	***26434***
Կառավարություն	-14605	-24525
Տնտեսություն	103257	101576
Չեռնարկ. և կազմակերպ.	61131	59751
որից՝ կուտակված տոկոսներ	455	497
Տնային տնտեսություններ	35422	35949
որից՝ կուտակված տոկոսներ	474	534
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	59	35
որից՝ կուտակված տոկոսներ	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6645	5841
որից՝ կուտակված տոկոսներ	71	43
Զուտ այլ ակտիվներ	-49095	-50617
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [3]	***133230***	***119963***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	***233198***	***220283***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [4]	***233818***	***220967***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	91997	79128
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [5]	31275	27057
կուտակված տոկոսներ	17	16
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	10138	13936
կուտակված տոկոսներ	163	142
Արտարժույթով ավանդներ	100408	100846
Ցպահանջ[5]	51076	49038
կուտակված տոկոսներ	5	6
Ժամկետային	49331	51808
կուտակված տոկոսներ	435	520
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)		
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***272***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-13123***
Կառավարություն	-	-9920
Տնտեսություն	-	-1681
Չեռնարկ. և կազմակերպ.	-	-1380
որից՝ կուտակված տոկոսներ	-	42
Տնային տնտեսություններ	-	527
որից՝ կուտակված տոկոսներ	-	60
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-24
որից՝ կուտակված տոկոսներ	-	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-804
որից՝ կուտակված տոկոսներ	-	-28
Զուտ այլ ակտիվներ	**-**	-1522
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	**-**	***-13267***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	**-**	***-12915***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	**-**	***-12851***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-12869
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-4218
կուտակված տոկոսներ	-	-1
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	3798
կուտակված տոկոսներ	-	-21
Արտարժույթով ավանդներ	-	438
Ցպահանջ	-	-2038
կուտակված տոկոսներ	-	1
Ժամկետային	-	2477
կուտակված տոկոսներ	-	85

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)		
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***0.1***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-33.2***
Կառավարություն	-	-67.9
Տնտեսություն	-	-1.6
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	- 2.3
Տնային տնտեսություններ	-	1.5
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-40.7
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-12.1
Զուտ այլ ակտիվներ	-	-3.1
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	-	***-10.0***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	-	***-5.5***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	-	***-5.5***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-14.0
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-13.5
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	37.5
Արտարժույթով ավանդներ	-	0.4
Ցպահանջ	-	-4.0
Ժամկետային	-	5.0

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] ԶԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով 1 ԱՄՆ դոլար=566 ՀՀ դրամ, 1 ՀՓԻ=1.4860 ԱՄՆ դոլար, 1 եվրո=1.2407 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի= 413.5 ԱՄՆ դոլար:

[3] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[4] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[5] Ընդգրկում են ռեզիդենտների հաշիվները և ցպահանջ ավանդները:

[6] Կատարվել է հաշիվների վերադասակարգում համապատասխան ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության նոր ձեռնարկի (2004 թ.), որի արդյունքում որոշ ցուցանիշներ տարբերվում են նախորդ հրապարակումներից:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1,2]

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [4]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [5]	Արտարժույթով ավանդներ	M2X [6]
2003							
Դեկտեմբեր	91997	31258	123255	9975	133230	99967	233197
2004							
Հունվար	79128	27041	106169	13794	119963	100320	220283

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1,3]

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [4]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [5]	Արտարժույթով ավանդներ	M2X [6]
2003							
Դեկտեմբեր	91997	31275	123272	10138	133410	100408	233818
2004							
Հունվար	79128	27057	106185	13936	120121	100846	220967

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:


[2] Ավանդների մեջ կուտակված տոկոսները չեն ընդգրկված:


[3] Ավանդների մեջ կուտակված տոկոսները ընդգրկված են:


[4] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):


[5] M2-ը դրամային զանգվածն է. ընդգրկում է M1-ը և դրամով ժամկետային ավանդները:


[6] M2X-ը փողի զանգվածն է. ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):



Փողի բազան տատանումների թույլատրելի միջակայքում
մլն ՀՀ դրամ
122500
120000
117500
115000
112500
110000
107500
105000
102500
100000
05.01.04
07.01.04
09.01.04
09.01.04
12.01.04
13.01.04
14.01.04
15.01.04
16.01.04
19.01.04
20.01.04
21.01.04
22.01.04
23.01.04
26.01.04
27.01.04
29.01.04
30.01.04
31.01.04
Փողի բազա
Ծրագիր
Ծրագիր՝ +2%
Ծրագիր՝ -2%



Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
120000
105000
90000
75000
60000
45000
30000
Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ
01
02
03
04
Կանխիկ դրամ ԿԲ-ից դուրս
Պարտ. պահուստ. դրամով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
250000
200000
150000
100000
50000
0
Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ
01
02
03
04
Շրջանառությունում կանխիկ դրամ
Ցպահանջ ավանդներ
Ժամկետային ավանդներ
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
70
65
60
55
50
45
40
35
30
25
20
98
99
00
01
02
03
04


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
100
90
80
70
60
50
98
99
00
01
02
03
04


Փողի բազայի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը
%
30
25
20
15
10
5
0
-5
-10
-15
01
02
03
04
Փողի բազա
Սղաճ


Փողի զանգվածի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը
%
15
10
5
0
-5
-10
-15
01
02
03
04
Փողի զանգված
Սղաճ

ՍԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1]

(մլն ՀՀ դրամ)

Ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
1997					
Հունվար	38487	31689	36898	40067	53443
Փետրվար	39585	31984	37642	41022	54611
Մարտ	40765	32011	37654	41129	56698
Ապրիլ	40232	32151	38444	42059	58897
Մայիս	43081	33337	39691	43378	61898
Հունիս	42967	34011	40686	44219	60712
Հուլիս	45258	34542	41521	44405	62720
Օգոստոս	47213	35392	44750	47687	67261
Սեպտեմբեր	48111	34555	42691	45693	65909
Հոկտեմբեր	48056	35168	43789	46948	67334
Նոյեմբեր	47536	34818	43298	46680	68470
Դեկտեմբեր	45296	33118	39771	42968	66746
1998					
Հունվար	44808	33657	42493	44284	70241
Փետրվար	45527	33078	42404	45629	70451
Մարտ	47003	35646	45943	49447	72587
Ապրիլ	47630	34906	44672	48195	74072
Մայիս	48710	33720	44332	48003	75149
Հունիս	49208	33726	45182	48529	78709
Հուլիս	50519	34559	46688	51117	83349
Օգոստոս	50320	35211	48329	53023	85894
Սեպտեմբեր	49686	36371	47542	52088	87344
Հոկտեմբեր	50173	36114	46948	51664	87985
Նոյեմբեր	47362	34236	44805	49274	85945
Դեկտեմբեր	48244	36443	47471	52964	90752
1999					
Հունվար	46999	34837	47648	52817	94986
Փետրվար	47875	32700	44231	48798	95247
Մարտ	47706	32491	43056	47467	96667
Ապրիլ	47053	35730	46962	51391	92394
Մայիս	47880	35627	48893	53162	96150
Հունիս	45808	35080	46197	51203	94279
Հուլիս	47928	36099	47139	52610	95698
Օգոստոս	47406	33985	45655	51036	96186
Սեպտեմբեր	51056	39128	51871	56665	102091
Հոկտեմբեր	49964	35997	47514	52226	101258
Նոյեմբեր	49459	37595	49580	54495	103415
Դեկտեմբեր	48256	37535	47035	51812	103136
2000					
Հունվար	48195	34273	45664	50232	101579
Փետրվար	49591	35746	46218	51061	107147
Մարտ	52550	37669	49329	54728	112504
Ապրիլ	52357	37412	48084	53743	113423
Մայիս	53456	38425	48714	53863	114073
Հունիս	57043	41052	52362	57455	122512
Հուլիս	55171	42321	53945	59299	124540
Օգոստոս	57310	43410	53911	58988	123378
Սեպտեմբեր	57144	44054	55078	59388	125271
Հոկտեմբեր	56761	44853	56534	61880	128129
Նոյեմբեր	65292	50888	64243	69710	140482
Դեկտեմբեր	64867	52401	64328	70621	143094
2001					
Հունվար	64714	47346	60425	66497	142284
Փետրվար	62236	48674	61823	67735	143296
Մարտ	63926	48223	61721	67397	146808
Ապրիլ	66885	50640	64325	70287	151309
Մայիս	65310	52517	64455	70134	151920
Հունիս	69940	54594	67290	73631	158375
Հուլիս	69289	53479	66648	72644	156314
Օգոստոս	69192	56059	67166	73594	157660
Սեպտեմբեր	70439	54177	67056	73559	154625
Հոկտեմբեր	72118	58254	71028	77582	160901
Նոյեմբեր	74001	59031	71953	78758	161796
Դեկտեմբեր	72016	57291	69615	76795	149505


2002					
Հունվար	71812	54932	67061	74684	147342
Փետրվար	75038	59393	72959	80545	151697
Մարտ	75298	60516	74732	81736	152332
Ապրիլ	78309	61237	75428	82426	155784
Մայիս	74649	61941	75475	82524	156026
Հունիս	78020	62350	77632	84585	159444
Հուլիս	76470	61991	76787	84280	159639
Օգոստոս	77732	63050	76405	83681	160856
Սեպտեմբեր	79163	66287	81619	92355	172636
Հոկտեմբեր	86979	71431	88142	99185	178780
Նոյեմբեր	88757	71712	89270	100650	180304
Դեկտեմբեր	99709	78009	103320	114045	192492
2003					
Հունվար	100050	73762	95688	106441	183913
Փետրվար	100711	77634	101665	110907	190105
Մարտ	97124	76903	99990	110148	186464
Ապրիլ	100651	77071	101937	112340	197643
Մայիս	103001	79862	104995	117646	200470
Հունիս	100011	79916	104045	117331	199239
Հուլիս	102053	82723	106500	119259	202576
Օգոստոս	102925	84460	106542	120011	203680
Սեպտեմբեր	101789	80993	106025	119344	205861
Հոկտեմբեր	101301	80913	107500	119604	205928
Նոյեմբեր	101164	80560	106077	118264	205216
Դեկտեմբեր	106262	81040	111270	122636	221576
2004					
Հունվար	103077	77843	104826	118884	219461

[1] Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:


Հարթեցման մեթոդիկան նկարագրված է «ՀՀ կենտրոնական բանկի բանբերի» 2001 թ. 2-րդ եռամսյակի համարում հրապարակված «ՀՀ փողի ագրեգատների թվային շարքերի հարթեցումներ» նյութում:

Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ, նոր տվյալների ի հայտ գալուն զուգահեռ, համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակներ



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները




Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՁՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]

(մլն ՀՀ դրամ)

Ցուցանիշներ	2003	2004
	Դ [4]	Հ
Կենտրոնական բանկի ՁԱԱ	153675	151496
Առևտրային բանկերի ՁԱԱ	40586	43037
Ընդամենը	194261	194533
Կենտրոնական բանկի ՁԱԱ [3]	***154559***	***152768***



[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:
[2] ՁԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ՁԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով, առևտրային բանկերի ՁԱԱ-ն փաստացի փոխարժեքներով:
[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:
[4] Կատարվել է հաշիվների վերադասակարգում համապատասխան ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության նոր ձեռնարկի (2004 թ.), որի արդյունքում որոշ ցուցանիշներ տարբերվում են նախորդ հրապարակումներից:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03	Հ - 04
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթ)	-651	-649
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	97	82
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով	-748	-731
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-	-
ԶՆԱ	741	748
Կառավարություն	70	75
Ջուտ պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	282	407
Պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	282	417
Պարտավորություններ առևտրային բանկերի նկատմամբ	0	-9
Տնտեսություն	2453	2354
Ջեռնարկություններ	1305	1190
Դրամով	289	266
Արտարժույթով	1015	924
Արժեթղթեր	-	-
Տնային տնտեսություններ	1116	1132
Դրամով	676	688
Արտարժույթով	440	444
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	33	32
Դրամով	-	-
Արտարժույթով	33	32
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-
Դրամով	-	-
Արտարժույթով	-	-
Այլ ռեզիդենտներ	-	-
Դրամով	-	-
Արտարժույթով	-	-
Ջուտ այլ ակտիվներ	- 2064	-2089
ՀՀ դրամ դրամարկղում	32	49
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	8	-
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	-	-
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով)	-	-
Ներդրումներ փայաբաժիններում	-	-
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ	-	-
Այլ ակտիվներ	520	508
Պարտավորություններ վարկային կազմակերպությունների նկատմամբ	-	-
Դրամական շուկայի գործիքներ	-	-
Դրամաշնորհներ	-190	-11
Կապիտալ հաշիվներ	-2205	-2388
Այլ պարտավորություններ	-229	-247
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	91	99
Դրամով փոխառություններ	-	-
Ցպահանջ փոխառություններ	-	-
Ժամկետային փոխառություններ	-	-
Արտարժույթով փոխառություններ	91	99
Ցպահանջ փոխառություններ	-	-
Ժամկետային փոխառություններ	91	99

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ-03	Հ-04
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)		
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	***193610***	***193884***
Զուտ արտաքին ակտիվներ (Կենտրոնական բանկ)	153675	151496
Զուտ արտաքին ակտիվներ (առևտրային բանկեր)	40586	43037
Զուտ արտաքին ակտիվներ (վարկային կազմ.)	-651	-649
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***39984***	***26716***
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը	**-14535**	**-24450**
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (Կենտրոնական բանկ)	-31507	-40710
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (առևտրային բանկեր)	16902	16184
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (վարկային կազմ.)	70	75
Պահանջներ տնտեսությանը	**105710**	**103922**
Պահանջներ տնտեսությանը (Կենտրոնական բանկ)	38	34
Պահանջներ տնտեսությանը (առևտրային բանկեր)	103218	101534
Պահանջներ տնտեսությանը (վարկային կազմ.)	2453	2354
Այլ ակտիվներ (զուտ)	**-51190**	**-52756**
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՑՎԵԼԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**233594**	**220600**
Ֆինանսական համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ	91965	79079
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [2]	31080	26751
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	10138	13936
Արտարժույթով ավանդներ	100321	100734
Վարկային կազմակերպությունների ներգրաված փոխառություններ	91	99
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)		
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]		**274**
Զուտ արտաքին ակտիվներ (Կենտրոնական բանկ)		-2179
Զուտ արտաքին ակտիվներ (առևտրային բանկեր)		2451
Զուտ արտաքին ակտիվներ (վարկային կազմ.)		2
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		**-13268**
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը		**-9915**
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (Կենտրոնական բանկ)		-9202
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (առևտրային բանկեր)		-718
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (վարկային կազմ.)		5
Պահանջներ տնտեսությանը		-1788
Պահանջներ տնտեսությանը (Կենտրոնական բանկ)		**-4**
Պահանջներ տնտեսությանը (առևտրային բանկեր)		-1685
Պահանջներ տնտեսությանը (վարկային կազմ.)		-99
Այլ ակտիվներ (զուտ)		**-1566**
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՑՎԵԼԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**-12995**
Ֆինանսական համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ		-12886
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [2]		-4329
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով		3798
Արտարժույթով ավանդներ		413
Վարկային կազմակերպությունների ներգրաված փոխառություններ		8

[1] ԶԱՄ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱՄ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով, իսկ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ԶԱՄ-ն փաստացի փոխարժեքներով:
[2] Ընդգրկում են ռեզիդենտների հաշիվները և ցպահանջ ավանդները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ԱՄՆ դոլար)


Անվանումը	2003 [3]	2004
	Դ	Հ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	503.7	499.3
Համախառն միջազգային պահուստներ	511.9	507.7
Ոսկի	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	6.5	18.8
Արտարժույթ [2]	505.4	489.0
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)* [4]	***505.8***	***501.7***

[1] Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[3] Նախնական է, ներառված չեն ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

[4] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

Ցուցանիշներ	2003[3]	2004
	Դ	Հ
Վարկեր [1]		
Իրավաբանական անձանց		
ՀՀ դրամով	21.7	24.4
ԱՄՆ դոլարով	17.7	19.0
Ֆիզիկական անձանց		
ՀՀ դրամով	23.9	22.4
ԱՄՆ դոլարով	25.4	27.5
Ավանդներ [1]		
Իրավաբանական անձանցից		
ՀՀ դրամով	6.1	8.2
ԱՄՆ դոլարով	6.7	5.4
Ֆիզիկական անձանցից		
ՀՀ դրամով	6.5	8.6
ԱՄՆ դոլարով	6.1	5.2
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	7.0	7.0
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	3.5	3.5
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	20.0	20.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը [2]	9.7	7.5
Սղաճ	8.6	2.5


[1] Ներկայացված են 90-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:


[2] Ներկայացված է 9 – 12-ամսյա պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

